223 թ. Օշին՝ Ատրպատական վերադառնալով՝ դրեց Սամարքանդցի Մուհամեդ ի. Սուլէյման Ազդիին Հայաստանի վերայ կառավարիչ, որ գնաց իւր պաշտօնատեղը։ Սահլ ի. Սմբատ, որ ապստամբել էր Աղուանքում եւ տիրել գաւառին, այստեղ միասին գիշերելիս հալածեց նորան։ Վարդանակերտում ապստամբեցաւ Մուհամեդ ի. Օբայդալլահ Վարդանակերտցին, որի դէմ Օշին ուղարկեց Մունկաջուրին՝ նորա հետ պատերազմելու։ Ապա Օշին նշանակեց Մուհամեդ ի. Խալիդ Բուխարախայային Հայաստանի վերայ, որ՝ գալով այստեղ՝ պատերազմեցաւ Ծանարների հետ եւ արշաւեց Տփղիս. Խահակի ի. Իսմայէլ նորան ընդառաջ ելաւ եւ սիրով ընդունեց նորան։ Հայաստանի վերայ ապա նշանակեցաւ Ալի ի. Հուսէյնի ի. Սիբայ Քայսեցին, որին երկրի ժողովուրդը նորա թուլութեան պատճառով արհամարհանք ցոյց էր։

Մուտասիմ դրեց Խալիդ ի. Եզիդին Հայաստանի եւ Դիար Ռաբիայի մի մասի վերայ։ Գալով Հայաստան Խալիդ լուր ստացաւ, որ երկրի բոլոր իշխանները՝ սաստիկ երկիւղ կրելով նորանից՝ ամրացել են (իրանց ամրոցներում) եւ ամեն պատրաստութիւն տեսել դիմադրելու։ Այս բանի մասին տեղեկացրեց Հայաստանի փոստի կառավարիչ Մանսուր ի. Խայ Սաբիին ամիրապետ Մուտասիմին, որ յետ կոչեց Խալիդին եւ վարչութեան իրաւունքը յանձնեց Ալի ի. Հուսէյնին. սակայն վերջինս մնաց (այստեղ) միայն միքանի օր, որովհետեւ զօրքը Պարտաւում նորա դէմ խռովեցաւ, պահանջելով իւր ռոճիկը. նա պատասխանեց. 'Ես ոչինչ չունիմ. ինչ որ կայ, երկրի ժողովրդի մասէ,. եւ նա պահանջեց (ռոճիկը) երկրի բնակիչներից. սակայն նոքա ընդդիմացան եւ ամրացան իրանց ամրոցներում։ Ապա միմեանց հետ թղթակցելուց յետոյ նոքա միասին դումարեցան եւ պաշարեցին Ալիին Պարտաւում։ Մուտասիմ ուղարկեց Համի-